Ուրբաթ, 8-ը հոկտեմբերի, 2010 թ.

Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 11 բարեգործական ծրագիր: Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքի բժշկական կենտրոնի մանկաբարձա-գինեկոլոգիական բաժանմունքի հիմնանորոգման, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանի Բերձոր և Մարտակերտ քաղաքների ջրամատակարարման համակարգի վերակառուցման նախագծման ծրագրերը.

«Հայաստանի ուսանողական ջոկատների հանրապետական շտաբ-կամավորական աշխատանքների ծառայություն» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Աշխատանքի միջազգային ճամբարների կազմակերպում Հայաստանում» ծրագիրը.

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կողես համայնքի ակումբի շենքի մասնակի վերանորոգման, Սյունիքի մարզի Կապան քաղաքի Սարահարթ թաղամասի թիվ 10 դպրոցի մարզադահլիճի, Շղարշիկ թաղամասի և Տանձավեր համայնքի խմելու ջրագծերի վերանորոգման, Հալիձոր, Բաղաբերդ և Երկաթուղայինների թաղամասերում մանկական խաղահրապարակների խաղասարքերով կահավորման ծրագրերը.

«Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող Երևանի թիվ 155 մանկապարտեզի սանհանգույցների հիմնանորոգման և Վանաձորի մանկատան տարածքում լվացքատան կառուցման ծրագրերը.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող «Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ուսումնական լաբորատորիաների վերազինում» ծրագիրը.

«Ամերիկայի Հայ Օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող Գավառի թիվ 1 հատուկ դպրոցի կոշիկի վերանորոգման, կարի և փայտամշակման արհեստանոցների վերանորոգման ծրագիրը:

Նիստում քննարկվել եւ հաստատվել են նաեւ նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ եւ տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: